

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԱԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### Մակար ՄԵԼԻՔՅԱՆ

*ԵՊՀ Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն ամբիոնի ասպիրանտ*

Խաղաղապահ առաքելությունների անձնակազմը տեղակայման երկրում պաշտպանված է անձեռնմխելիությամբ, ինչն անհրաժեշտ է առաքելության բնականոն գործունեության համար: Հետձգնաժամային երկրներում գործող ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունները հաճախ ներգրավվում են նպաստելու պետականաշինությանը և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը: Սակայն գործնականում խաղաղապահներն իրենք էլ են երբեմն ոտնահարում այն արժեքները, որոնք նրանք կոչված են պաշտպանելու: Քիչ չեն դեպքերը, երբ խաղաղապահները չարաշահում են իրենց անձեռնմխելիությունը և կատարում ապօրինի և անբույլատրելի քայլեր, որոնց կանխարգելմանն ուղղված միջոցների ուսումնասիրությանն էլ նվիրված է այս աշխատանքը:

Ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասերից: Առաջին մասում մենք կներկայացնենք խաղաղապահների անձեռնմխելիությունն ու արտոնություններն ըստ միջազգային իրավական նորմերի և ըստ ուժերի տեղակայման վերաբերյալ պայմանագրերի: Երկրորդ մասում մենք անդրադարձ կկատարենք խաղաղապահների կողմից նախկինում իրականացված իրավախախտումներին, իսկ երրորդ մասում կուսումնասիրենք խաղաղապահների պատասխանատվության խնդիրը, առկա մեխանիզմների արդյունավետությունն ու չկարգավորված մնացած հարցերը:

#### 1.1. ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ԱՆՁԵՐՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱԿ-ի կանոնադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ «Միավորված ազգերի կազմակերպությունն իր յուրաքանչյուր անդամի տարածքում օգտվում է այնպիսի արտոնություններից ու անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են իր նպատակներն իրականացնելու համար»: Խաղաղապահ առաքելությունները դիտարկվում են որպես Անվտանգության խորհրդի օժանդակ մարմին ու ՄԱԿ-ի «անհրաժեշտ աշխատակազմ»՝ օգտվելով այդ կարգավիճակից բխող բոլոր արտոնություններից ու անձեռնմխելիություններից (հոդվ. 29 և 97):

Այսինքն՝ կանոնադրության մեջ սահմանվում է միայն «ֆունկցիոնալ իմունիտետ», սակայն 1946թ. «ՄԱԿ-ի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում», ինչպես նաև տեղակայվող զորքի կարգավիճակի վերաբերյալ կնքվող համաձայնագրերում, ՄԱԿ-ի իմունիտետի շրջանակն ավելի լայն է ներկայացվում, քան այն ենթադրվում է ֆունկցիոնալ իմունիտետի դեպքում<sup>1</sup>:

Նախ, ըստ կոնվենցիայի՝ ՄԱԿ-ի համար, որպես կազմակերպություն, սահմանվում է ամբողջական անձեռնմխելիություն պետությունների իրավական համակարգերից, և միակ բացառությունն այն է, երբ ՄԱԿ-ը, ի դեմս Գլխավոր քարտուղարի կամ Անվտանգության խորհրդի, հստակ կերպով հրաժարվում է իր անձեռնմխելիությունից կոնկրետ դեպքի համար<sup>2</sup>:

<sup>1</sup> *Convention On the Privileges and Immunities of the United Nations*, 1 U.N.T.S. 13 (1946).

<sup>2</sup> *Ibid.*, *UN Immunities*, Article II, Section 2; Article V, Section 20.

Բացի դրանից, կոնվենցիան ՄԱԿ-ի պաշտոնյաների համար սահմանում է դիվանագիտական անձեռնմխելիությանը համահավասար արտոնություններ և անձեռնմխելիություններ<sup>3</sup>: Խաղաղապահ առաքելությունների ղեկավար պաշտոնյաների համար այս մակարդակի անձեռնմխելիությունն ամրագրվում է նաև զորքերի կարգավիճակի մասին համաձայնագրերում<sup>4</sup>:

Խաղաղապահ առաքելությունների կազմում ներառված ՄԱԿ-ի քարտուղարության աշխատակիցների համար գործում է կոնվենցիայով սահմանվող էքսպերտի կարգավիճակը, որն արդեն վերջիններիս ապահովում է ֆունկցիոնալ անձեռնմխելիությամբ, որի համաձայն՝ անձեռնմխելիությունը պետք է ապահովվի այնքանով, որքանով անձեռնմխելիությունն «անհրաժեշտ է իրենց առաքելության ժամանակ անկախ կերպով իրականացնելու իրենց գործառնությունները»<sup>5</sup>: Սակայն խաղաղապահների տեղակայման ողջ ընթացքում նրանք համարվում են «գործող էքսպերտներ», ինչը փաստացի պաշտպանում է նրանց անձեռնմխելիությամբ<sup>6</sup>:

Ինչ վերաբերում է պետությունների տրամադրած ռազմական և ոստիկանական անձնակազմին, ապա նրանց անձեռնմխելիությունը տեղակայման երկրում սահմանվում է ՄԱԿ-ի և տեղակայման պետության միջև կնքվող զորքերի կարգավիճակի համաձայնագրերով, որոնք ամրագրում են այդ զորքերի հանդեպ տրամադրող պետության ամբողջական քրեական իրավագործության պահպանումը<sup>7</sup>:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հաստատել է համաձայնագրերի օրինակելի ձևեր, որոնց հիման վրա կնքվում են համաձայնագրեր մի կողմից տեղակայման պետության կառավարության հետ, և մյուս կողմից՝ զորք և տրամադրող պետությունների հետ: Միևնույն ժամանակ, համաձայնագրերի կողմերի համաձայնությամբ խաղաղապահների համար կարող են սահմանվել նաև ավելի լայն անձեռնմխելիություններ<sup>8</sup>: Հատկանշական է, որ օրինակ՝ Կոտ դ'Իվուարում «UNOCI»-ն տեղակայվում է նախքան զորքերի կարգավիճակի պայմանագրի կնքումը, և Անվտանգության խորհուրդն իր բանաձևում նշում է, որ մինչև Կոտ դ'Իվուարի կառավարության հետ պայմանագրի կնքումը խաղաղապահների կարգավիճակի վերաբերյալ ժամանակավորապես գործելու է «A/45/594» բանաձևի օրինակելի ձևը<sup>9</sup>:

Իսկ Արևելյան Թիմորի և Կոսովոյի նման դեպքերում, որտեղ փաստացի տեղակայման երկրի կառավարություն չկա, որպեսզի ՄԱԿ-ը վերջինիս հետ պայմանագիր կնքի, խաղաղապահների անձեռնմխելիության երաշխիքները ամրագրվում են միայն ՄԱԿ-ի և զորք տրամադրող պետությունների միջև կնքվող համաձայնագրերում<sup>10</sup>:

Բացի այդ, ժամանակավոր կառավարման լիազորություններով առաքելությունների ղեկավարներին Անվտանգության խորհուրդը լիազորում է անձեռնմխելիությունների շրջանակը ինքնուրույն ընդլայնելու իրավասությամբ<sup>11</sup>: Այսպես, Կոսովոյում «KFOR»-ի

<sup>3</sup> Walter Gary Sharp, Sr., "Symposium: the United Nations, Regional Organizations, and Military Operations: Article: Protecting the Avatars of International Peace and Security"; 7 *DUKE J. COMP. & INT'L L.* 93, Fall, 1996, p 129:

<sup>4</sup> United Nations, *Model Status of Forces Agreement*, UN Doc A/45/594 (1990), para. 24.

<sup>5</sup> *Ibid.*, See also *UN Immunities*, Article VI; Rawski, *To Waive or Not To Waive: Immunity and Accountability in U.N. Peacekeeping Operations*, 18 *CONN. J. INT'L L.* 103 (2002):

<sup>6</sup> *Ibid.*

<sup>7</sup> See *Model SOFA*, *supra* note 4, para. 27(b).

<sup>8</sup> *Ibid.*, A/C.5/66/8; Annex Chapter 9; *Rawski*, *supra* note 5.

<sup>9</sup> S/Res/1528(2004), para. 9:

<sup>10</sup> See *Rawski*, *supra* note, p. 108.

<sup>11</sup> *Ibid.*, p. 109.

կարգավիճակի շուրջ տարածայնությունները վերացնելու համար «UNMIK»-ը 2000թ. ընդունում է հատուկ որոշում, որով ուղղակիորեն ամրագրվում է «KFOR»-ի անձնակազմի ամբողջական անձեռնմխելիությունը<sup>12</sup>:

## 1.2. ԽՆՈՒՆՈՒՄԵՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ԻՐԱՎԱՍԱՆՏՈՒՄՆԵՐԸ:

Իրավական տեսանկյունից խաղաղապահներն անձեռնմխելի են տեղակայման երկրում, սակայն դա չի նշանակում, որ նրանք չպետք է հանցագործությունների կատարման դեպքում անպատիժ մնան: Այնուամենայնիվ, առաքելությունների փորձը ցույց է տալիս, որ անձեռնմխելիությունը որոշ խաղաղապահների մոտ ստեղծում է անպատժելիության զգացում<sup>13</sup>: Խնդիրը հատկապես արդիական է առաքելության զինվորական անձնակազմի շրջանում: Իսկ իրավախախտումների պատճառներից մեկը հոգեբանորեն բարդություններն են ուժ գործադրողից խաղաղության պահապանի վերածվելու ընթացքում<sup>14</sup>:

Խաղաղապահների կողմից թույլ տրված իրավախախտումների օրինակները բազմաթիվ են: Հատկապես մտահոգիչ են խոցելի խմբերի՝ կանանց և անչափահասների հանդեպ բռնությունները, ներառյալ սեռական շահագործումը, թրաֆիքինգի կազմակերպմանն աջակցությունը, հանցավոր խմբավորումների հետ համագործակցությունը և այլն<sup>15</sup>: Եղել է նաև մեղադրանք Ռուանդայում խաղաղապահներից մեկի դեմ, որն օգնում էր ցեղասպանություն կատարողներին նույնականացնել ու տուտսիներին<sup>16</sup>:

Տեղակայված զինվորականները հաճախ նպաստում են նաև մարմնավաճառության ավելացմանը, ինչը նաև կարող է հանգեցնել կանանց և երեխաների թրաֆիքինգի ավելացմանը<sup>17</sup>: Ավելին, Բոսնիայում խաղաղապահներին մեղադրում էին բազմաթիվ կանանց թրաֆիքինգի զոհ դարձնելու մեջ՝ սեռական շահագործման ենթարկելու նպատակով<sup>18</sup>: Երբեմն թրաֆիքինգի ենթարկվող կանանց առևտուրը կազմակերպվում է հենց խաղաղապահների ճամբարների դարպասների առջև<sup>19</sup>: Ըստ 2000-2001 թվականների ՄԱԿ-ի մարդու իրավունքների տարածաշրջանային պաշտոնյա Դավիթ Լամբի՝ «Սեռական ստրուկների վաճառքը Բոսնիայում հիմնականում գոյություն ունի ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների պատճառով. առանց խաղաղապահների ներկայության հարկադրված մարմնավաճառությունը Բոսնիայում կլիներ շատ քիչ»<sup>20</sup>: 1990-ական

<sup>12</sup> *Regulation On the Status, Privileges and Immunities of KFOR and UNMIK and Their Personnel in Kosovo*, UNMIK/REG/2000/47 (2000).

<sup>13</sup> Special Committee on Peacekeeping Operations, *Comprehensive review of the whole question of peacekeeping operations in all their aspects*, UN Doc. A/54/839 (2000).

<sup>14</sup> See Carlos Scin, *Heart of Peacekeeping Training: The Challenge of Avoiding Darkness in a Soldier's Mind*, 2 PEACEKEEPING & INT'L REL (2001).

<sup>15</sup> Տես Ռազմավարական մշակումների կենտրոն, «Խաղաղապահներ. տեղեկատվական փաթեթ», Երևան, 2006, հղ. <http://armenianhouse.org/eu/xph-web.pdf>; Frederick Rawski, *To Waive or Not To Waive: Immunity and Accountability in U.N. Peacekeeping Operations*, 18 CONN. J. INT'L L. 103 (2002).

<sup>16</sup> *Ibid.*

<sup>17</sup> See Keith J. Allred, *Peacekeepers and Prostitutes: How Deployed Forces Fuel the Demand for Trafficked Women and New Hope for Stopping It*, 33 ARM. FOR. & SOC. 5 (2006), p. 9.

<sup>18</sup> See Jennifer Murray, *Who Will Police the Peace-Builders? The Failure to Establish Accountability for the Participation of United Nations Civilian Police in the Trafficking of Women in Post-Conflict Bosnia and Herzegovina*, 34 COLUM. HUMAN RIGHTS L. REV. 475 (2003); Rawski, *supra* note 5, p. 116.

<sup>19</sup> See *supra* note 17 p. 7.

<sup>20</sup> *Ibid.*

թվականների հետևյալ ֆիլիտային երկրների մեկ այլ ուսումնասիրություն ցույց է տալիս, որ այդ երկրների կեսում խաղաղապահների ժամանումը զուգակցվել է երեխաների մարմնավաճառության արագ աճով<sup>21</sup>:

### 1.3. ԽԱՂԱՂԱԿԱՀՆԵՐԻ ԻՐԱՎԱՍԽԱՄԱՍԽԱՆՄԱՆ ԿՈՒՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Խաղաղապահների անձեռնմխելիությունը չի նշանակում ազատում իրավախախտումների համար պատժից. խաղաղապահները պարտավոր են պահպանելու թե՛ մարդու իրավունքների, թե՛ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Սակայն 1990-ականներից ի վեր որոշ խաղաղապահներ Բալկաններում, Արևելյան Թիմորում, Սոմալիում, Կոնգոյում, Հաիթիում և այլուր կատարել են լուրջ իրավախախտումներ և անպատիժ մնացել: Սա թերևս պայմանավորված է պատասխանատվության թույլ համակարգով:

Խաղաղապահների գործողությունների համար մի կողմից պատասխանատու են հենց իրավախախտ անձիք, իսկ մյուս կողմից՝ ՄԱԿ-ը կամ զորք տրամադրող պետությունը՝ կախված նրանից, թե նշվածներից ով է արդյունավետ վերահսկողություն իրականացնում խաղաղապահների գործողությունների հանդեպ<sup>22</sup>: Սակայն ՄԱԿ-ին կամ զորք տրամադրող պետություններին պատասխանատվության կանչելու գործուն մեխանիզմներ ըստ էության չկան:

ՄԱԿ-ն ընդունում է իր պատասխանատվությունը ՄԱԿ-ի պաշտոնյաների հրամանատարությամբ գործող խաղաղապահների համար<sup>23</sup>: 1999թ. ԱՄՆ-ն նույնպես գտավ, որ կազմակերպության՝ դատական վարույթից անձեռնմխելիություն ունենալը չի ազատում նրան իր անօրինական գործողությունների համար պատասխանատվության ենթարկվելուց<sup>24</sup>: Այնուամենայնիվ ՄԱԿ-ը մշտապես օգտվել է իր անձեռնմխելիությունից և փաստացի պատասխանատվության երբեք չի ենթարկվել<sup>25</sup>:

Ինչ վերաբերում է զորք տրամադրող պետություններին, ապա Կոսովոյում որոշ անհատներ փորձել են զորք տրամադրող պետություններին պատասխանատվության կանչել *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի* միջոցով, սակայն դատարանը հրաժարվել է գործն ըստ էության քննելուց՝ գտնելով, որ «UNMIK»-ի, «KFOR»-ի անձնակազմի գործողությունները վերագրելի են ՄԱԿ-ին, իսկ ՄԱԿ-ի գործողությունների իրավաչափությունը քննելու իրավասություն դատարանը չունի<sup>26</sup>: Սակայն այս դիրքորոշումը խիստ քննադատության է արժանացել մի շարք գիտնականների կողմից, քա-

<sup>21</sup> *Ibid.*

<sup>22</sup> Խաղաղապահների կողմից իրավախախտումների համար պետության կամ միջազգային կազմակերպության պատասխանատվությունը որոշվում է ըստ արդյունավետ վերահսկողության թեստի, որը ԱՄՆ-ն կիրառել է *Նիկարագուայի և Ցեղասպանության գործերում*: *See Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. U.S.A.)*, ICJ Reports 14 (1986); *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia v. Serbia)*, I.C.J. (2007).

<sup>23</sup> *Report of the International Law Commission*, UN Doc. A/59/10 (2004), p. 111; *Report of the Secretary-General*, UN Doc. A/51/839 (1996), para 17.

<sup>24</sup> *Difference Relating to Immunity from Legal Process of a Special Rapporteur of the Commission on Human Rights*, Advisory Opinion, ICJ Reports 62 (1999), p. 69.

<sup>25</sup> Kjetil Mujezinovic Larsen, *Attribution of Conduct in Peace Operations: The 'Ultimate Authority and Control' Test*, 19 EJIL 509 (2008), p. 512; *UN Immunities*, Article II, Section 2, Article V, Section 20.

<sup>26</sup> *Decision as to the Admissibility of App. No. 71412/01 Agim Behrami and Bekir Behrami v. France, and App. No. 78166/01 Ruzhdi Saramati v. France, Germany and Norway*, Grand Chamber decision of 2 May 2007, ECHR (2 May, 2007).

նի որ նույնիսկ ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող խաղաղապահ գործողությունները համարվում են վերագրելի ՄԱԿ-ին միայն այն պատճառով, որ դրանք լիազորվել էին Անվտանգության խորհրդի կողմից<sup>27</sup>: Մինչդեռ ավելի տրամաբանական կլիներ դիտարկել գործողությունները համատեղ գործողության լույսի ներքո, որի դեպքում դրանք պետք է վերագրելի լինեն միաժամանակ և՛ միջազգային կազմակերպությանը, և՛ պետությանը: Սակայն դատարանը նախընտրում է առաքելության բոլոր գործողությունները վերագրել ՄԱԿ-ին՝ փակելով է իր կողմից խաղաղապահների պատասխանատվությանն առնչվող գործերի քննության հնարավորությունը<sup>28</sup>:

Խաղաղապահներին անձնական պատասխանատվության ենթարկելը նույնպես բարդ խնդիր է: Ըստ տեղակայման երկրի հետ զորքի կարգավիճակի մասին համաձայնագրերի՝ ՄԱԿ-ը հանձն է առնում երաշխիքներ ստանալու զորք տրամադրող պետություններից, որ վերջիններս կհետևեն տեղակայվող անձնակազմի կարգապահությանը և իրավախախտումների համար կենթարկեն պատասխանատվության<sup>29</sup>: Սակայն մինչև 2007թ. ՄԱԿ-ն ընդհանրապես չէր ստանում նման երաշխիքներ զորք տրամադրող պետություններից<sup>30</sup>: Եվ քանի որ միջազգային պայմանագրերը չէին կարող պարտավորություններ ստեղծել երրորդ կողմերի համար, զորք տրամադրող պետություններն ընդհանրապես պարտավորված չէին պատասխանատվության ենթարկելու իրենց խաղաղապահներին<sup>31</sup>:

Միայն 2007 թվականից զորք տրամադրող պետությունների հետ կնքվող փոխըմբռնման համաձայնագրերում ներառվում են նաև հանգամանալից դրույթներ, որոնցով պետությունները հանձն են առնում հետևելու խաղաղապահ առաքելություններին մասնակցող իրենց ուժերում կարգապահությանը և պատասխանատվության ենթարկելու իրավախախտումներ կատարած անձանց<sup>32</sup>:

Իրավախախտներին իմունիտետից զրկելը քաղաքական որոշման խնդիր է, և հնարավորության դեպքում թե՛ պետությունները, թե՛ ՄԱԿ-ը հակված են խուսափելու իրենց խաղաղապահների իրականացրած հանցանքների մասին բարձրաձայնելուց: 1990-ական թթ. ՄԱԿ-ը փորձում էր ընդհանրապես թաքցնել խաղաղապահների կատարած իրավախախտումները: Բայց հետագայում խնդիրը ուշադրության կենտրոնում է պահվում, և կազմակերպությունը որոշակի միջոցներ է ձեռնարկում իրավախախտումների բացահայտման և պատասխանատվության ենթարկելու համար:

Բացի այդ, խաղաղապահների գործողությունների հետաքննումն ինքնին բավական բարդ գործընթաց է, քանի որ հանցագործությանն առնչվող վկաներն ու ապացույցները դժվար հասանելի են զորք տրամադրող պետության դատարանների համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ պետությունները ցանկանում են պատասխանատվության ենթարկել իրենց խաղաղապահներին, նրանք հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ հետաքննության արդյունքները թերի կամ անբավարար են լինում ներպետական օրենքի հիման վրա մեղադրվող խաղաղապահներին պատասխանատվության ենթարկելու համար<sup>33</sup>:

<sup>27</sup> See e.g. Larsen, *supra* note 25; Alexander Breitegger, *Sacrificing the Effectiveness of the European Convention on Human Rights on the Altar of the Effective Functioning of Peace Support Operations: A Critique of Behrami & Saramati and Al Jedda*, 2 INT'L COM. LAW REV. 155 (2009).

<sup>28</sup> See Larsen, *supra* note 25, p 512.

<sup>29</sup> Model SOFA, *supra* note 4 para. 48.

<sup>30</sup> UN Conduct and Discipline Unit, *Investigations*, at <http://cdu.unlb.org/Statistics/Investigations.aspx>

<sup>31</sup> *Vienna Convention on the Law of Treaties*, 1155 U.N.T.S.331 (1969), Art. 34-35.

<sup>32</sup> A/C.5/66/8; Annex Chapter 9

<sup>33</sup> *Ibid*, pp. 14-16.

Եթե զինվորական և ոստիկանական անձնակազմը պետք է պատասխանատվության ենթարկվի հայրենիքում, ապա ՄԱԿ-ի քարտուղարության աշխատակիցների և էքսպերտի կարգավիճակով անձնակազմի կողմից նմանատիպ խախտումների դեպքում կազմակերպությունը պետք է տվյալ պաշտոնյային զրկի իմունիտետից, և դատավարությունն իրականացվի տեղակայման երկրում<sup>34</sup>: ՄԱԿ-ի աշխատակիցները և էքսպերտները ավելի քիչ են լուրջ իրավախախտումներ կատարվում, քան ռազմական անձնակազմը: Սակայն Կոսովոյում, Արևելյան Թիմորում և այլուր նման իրավախախտումներ ևս տեղի են ունեցել, և ՄԱԿ-ը որոշ պաշտոնյաների զրկել է անձեռնմխելիությունից<sup>35</sup>:

Խաղաղապահներին պատասխանատվության կանչելու նոր հնարավորություն է ձևավորվում *Միջազգային քրեական դատարանի* հիմնումից հետո, որը սակայն իրավատու է քննել միայն միջազգային քրեական հանցագործությունները՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ հանցագործությունները և պատերազմական հանցագործությունները, և միայն այն պետությունների տարածքում, որոնք վավերացրել են Հռոմի ստատուտը<sup>36</sup>: Այնուամենայնիվ քիչ հավանական է, որ խաղաղապահները նման ծավալների իրավախախտումներ իրականացնեն: Բացի այդ, ԱՄՆ-ը, որը չի վավերացրել Հռոմի ստատուտը, հետևողականորեն չեզոքացնում է ՄԱԿ-ի խաղաղապահ կամ հարկադրական մասնակցող իր զինվորականների հանդեպ ՄՔԴ իրավագործությունը<sup>37</sup>:

Որոշ հեղինակներ առաջարկում են ստեղծել Միջազգային մարդասիրական օմբուդսմենի ինստիտուտը, որը համաշխարհային մակարդակով կգբաղվեր խաղաղապահների կողմից մարդասիրական իրավունքի ոլորտում թույլ տված իրավախախտումների բացահայտմամբ<sup>38</sup>:

Այն մեխանիզմը, որով ՄԱԿ-ը 2008 թվականից փորձում է պայքարել խաղաղապահների կողմից իրավախախտումների կատարման դեմ, ընդհանուր առմամբ ուրվագծվել էր խաղաղապահների կողմից սեռական շահագործման վերաբերյալ 2005թ. ՄԱԿ-ի զեկույցում<sup>39</sup>: Մեխանիզմի հիմնական երեք տարրերը պարբերական ստուգումների կազմակերպումն է, խաղաղապահների դեմ բողոքների վերաբերյալ ընդհանուր տվյալների բազայի պահպանումը և լուրջ մեղադրանքների դեպքում տվյալ խաղաղապահի հանդեպ հայրենիքում ձեռնարկվող իրավական միջոցներին հետևելը<sup>40</sup>: Այս մեխանիզմն անշուշտ իր դրական ազդեցությունն է բերում իրավախախտումների դեմ պայքարում: Դրանով հանդերձ, համակարգը դեռևս կենտրոնանում է միայն լուրջ իրավախախտումների վրա: Իսկ խաղաղապահներին զորք տրամադրող պետություններում պատժելու

<sup>34</sup> See Michael Singer, *Jurisdictional Immunity of International Organizations: Human Rights and Functional Necessity Concerns*, 36 VA. J. INT'L L. 53 (1995).

<sup>35</sup> *Rawski*, *supra* note 5.

<sup>36</sup> *Rome Statute of the International Criminal Court*

<sup>37</sup> 2003թ. ԱՄՆ-ը սպառնաց վետոյի իր իրավունքի միջոցով կանխելու ՄԱԿ-ի բոլոր խաղաղապահ առաքելությունների մանդատների երկարաձգումը, եթե չերաշխավորվի ամերիկացի խաղաղապահների հանդեպ ՄՔԴ-ի իրավագործության բացառումը: Արդյունքում 2002 և 2003թ. ընդունվեցին Անվտանգության խորհրդի 1422(2002) և 1487(2003) բանաձևերով մեկական տարով առկախվեց Հռոմի ստատուտի տարածումը ՄԱԿ-ի հիմնած կամ լիազորած գործողությունների հանդեպ: Իսկ հաջորդող տարիներին ԱՄՆ-ը չեզոքացնում է ՄՔԴ իրավագործությունը երկկողմ պայմանագրերի միջոցով: *Stu AMICC, Peacekeeping and the ICC*, available at [http://www.amicc.org/usinfo/administration\\_policy\\_pkeeping.html](http://www.amicc.org/usinfo/administration_policy_pkeeping.html).

<sup>38</sup> See *Murray*, *supra* note *Rawski*, *supra* note 5, p. 116.

<sup>39</sup> See *UN Report on Sexual Exploitation and Abuse by UN Peacekeeping Personnel*, UN Doc. A/59/710 (2005), para. 78;

<sup>40</sup> UN Conduct and Discipline Unit, *Investigations*, at <http://cdu.unlb.org/Statistics/Investigations.aspx>

հարցը շարունակում է մնալ այդ պետությունների քաղաքական որոշման խնդիր, որոնց կշարունակեն առաջնորդվել հնարավորինս քիչ աղմուկ ստեղծելու սկզբունքով:

Ներկայումս ՄԱԿ-ը փորձում է զարգացնել խաղաղապահների պատասխանատվության մեխանիզմը իրավախախտումների համար: Սակայն առկա համակարգն ունի սահմանափակ հնարավորություններ և դեռևս չի կարող արդյունավետ կերպով կանխել նշված բացասական երևույթները: ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները մեծ հավանականությամբ իրենց հետ բերում են նաև տարաբնույթ իրավախախտումների և մարմնավաճառության ու թրաֆիքինգի աճին:

Պատասխանատվության համակարգը թերևս ավելի արդյունավետ կլիներ, եթե ձևավորվեր հատուկ միջազգային դատական մարմին, որը կքններ խաղաղապահների իրավախախտումները: Նման համակարգի դրական կողմերը կլինեին միասնական մոտեցումը և ուղղակիորեն խաղաղապահների քայլերը քննության առնելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ զորք տրամադրող պետությունները կհամաձայնեն խաղաղապահներին պատասխանատվության կանչել-չկանչելու քաղաքական լիազորությունը փոխարինել միջազգային դատական ատյանով:

Իսկ խաղաղապահ առաքելությունների տեղակայման երկրների շահերից է բխում, որպեսզի խաղաղապահ առաքելությունները ունենան հնարավորինս սահմանափակ անձնակազմ և տեղակայված լինեն խոշոր բնակավայրերից հնարավորինս հեռու:

## THE ISSUE OF RESPONSIBILITY IN THE PEACEKEEPING OPERATIONS

**Makar MELIKYAN**

*PHD Student of YSU International*

*Relations and Diplomacy Department*

The personnel of the peacekeeping operations are protected with the immunity while deployed in the receiving country. This is necessary for the ordinary performance of the functions of the peacekeeping mission. Many UN peacekeeping operations in post-conflict countries are to contribute to the state-building and the strengthening of human rights protection. However sometimes peacekeepers also violate the values which they are supposed to protect. The illegal and inadmissible behavior of some peacekeepers with abuse of immunity was not a rare phenomenon, especially in the 1990s, and in this paper the ways of preventing such violations are discussed.

The paper consists of three parts. In the first part the privileges and immunities of the peacekeepers are presented in accordance with the international law and the agreements concerning the deployment of a peacekeeping mission. The second part we touch upon some violations by the peacekeepers which occur more often. And in the third part the issue of liability of the peacekeepers the efficiency of the existing mechanisms and the remaining problems are analyzed.